ՏԵՂԵԿԱՆՔ

««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«**Հոդված 29.1. Օպերատորի ընտրության մրցույթի անցկացման ընթացակարգում բողոքարկման իրավունքը**

1. Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի արդյունքներում շահագրգռվածություն ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու Հանձնաժողովի՝ որակավորման հայտը մերժելու կամ հաղթող հայտատուի հայտարարման վերաբերյալ որոշումը՝ համապատասխան որոշման ծանուցման կամ հրապարակման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

2. Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի, այդ թվում՝ բողոքի քննարկման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:»: